ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Խնայեք և կուտակեք Ձեր միջոցներն ապագայի ծրագրերն իրականացնելու համար

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար:

Հրապարակման ամսաթիվ՝ ապրիլ, 2024

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բովանդակություն

Կուտակային ժամկետային ավանդ 3
Տոկոսադրույքներ 5
Պայմաններ 6
Կարևոր տեղեկություններ 10

Կուտակային ժամկետային ավանդ

Այսօրվա պատշաճ պլանավորումը վաղը ֆինանսապես ապահովված և բարեկեցիկ ապագա ունենալու գրավականն է:

Ներդրեք Ձեր ազատ ֆինանսական միջոցները կուտակային ժամկետային ավանդի տեսքով, կուտակեք և ավելացրեք Ձեր խնայողությունները:

Ավանդի արժույթ

Բանկն ընդունում է Կուտակային ավանդներ հետևյալ արժույթներով.

- ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլար
- Եվրո

Ավանդի ժամկետ

- նվազագույնը՝ 3 տարի
- առավելագույնը՝ 10 տարի ՀՀ դրամով և 5 տարի ԱՄՆ դոլարով կամ եվրոյով Կուտակային ավանդների դեպքում

Կարևոր նշում

Արժույթով բանկային ավանդը ենթադրում է արտարժութային ռիսկ՝ կապված փոխարժեքի տատանումների հետ. մասնավորապես, տվյալ արտարժույթի փոխարժեքի տատանումների դեպքում Ձեր գումարի ՀՀ դրամով համարժեքը կարող է փոփոխվել:

Ավանդի նվազագույն գումար

- ՀՀ դրամով ավանդի դեպքում՝ 100 000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ 500 ԱՄՆ դոլար/եվրո

Օրինակ

Հաճախորդը 30 տարեկան է և որոշում է բացել Կուտակային ժամկետային ավանդ՝ 100 000 ՀՀ դրամ սկզբնական գումարով, 10 տարի ժամկետով և 8.00% տոկոսադրույքով:

Ավանդի ժամկետի առաջին կեսի ընթացքում ամսական 30 000 ՀՀ դրամ կուտակելու և տոկոսագումարը կապիտալացնելու դեպքում, հաճախորդի 40 տարին լրանալու պահին նրա ավանդի մնացորդը կկազմի 3 276 807 ՀՀ դրամ (եթե վերը նշված նախնական պայմանները չփոփոխվեն ավանդի ողջ տևողության ընթացքում): Մանրամասները ներկայացված են ստորև:

Սկզբնական գումար	Ամսական ներդրումներ	Կուտակված գումար		
		5 տարի անց	7 տարի անց	10 տարի անց
100 000 ՀՀ դրամ	30 000 ՀՀ դրամ	2 302 721 ՀՀդրամ	2 658 099 ՀՀ դրամ	3 276 807 ՀՀ դրամ

Ավանդի տոկոսադրույք*

Կուտակային ժամկետային ավանդի տոկոսադրույքները ներկայացված են սույն տեղեկատվական ամփոփագրին կից հավելվածում:

Ավանդի տոկոսադրույքի հաշվարկման եղանակ

Կուտակային ժամկետային ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը հավասար է Բանկի մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի (ՄՀՏ) և Բանկի կողմից սահմանված հաստատուն մարժայի տարբերությանը:

Տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի գումարի նկատմամբ օրական կտրվածքով և կարող է վճարվել հետևյալ տարբերակներով.

- Հաշվեգրված տոկոսագումարի վճարում Ձեր կողմից նշված հաշվին՝ ամսական, եռամսյակային պարբերականությամբ կամ ժամկետի վերջում:
- Հաշվեգրված տոկոսագումարի կապիտալացում՝ ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ և վճարում ավանդի մարման ժամանակ:

Կարևոր նշում

- Ավանդը բացելու պահին Բանկի կողմից սահմանված անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի գործողության ընթացքում բացառապես ՄՀՏ-ի փոփոխման հետևանքով (ՄՀՏ-ի վերաբերյալ մանրամասներին ծանոթանալու համար այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am):
  Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից սահմանված հաստատուն մարժան չի կարող փոփոխվել:
- Տոկոսադրույքի փոփոխության դեպքում Բանկը Ձեզ տեղյակ կպահի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ: Տոկոսադրույքի նվազման դեպքում մինչև փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելու պահը Դուք իրավունք ունեք դադարեցնել Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի գործողությունը՝ ստանալով ավանդի գումարը և մինչև պայմանագրի դադարեցման պահն ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ: Եթե ավանդի պայմանագիրը դադարեցվում է փոփոխված տոկոսադրույքն ուժի մեջ մտնելուց հետո, ապա կկիրառվի Կուտակային ավանդի վաղաժամկետ դադարեցման համար նախատեսված տոկոսագումարի հաշվարկման կարգը:

*Ավանդի գումարը 250 միլիոն ՀՀ դրամը կամ համապատասխան արժույթի 500 հազար միավորը գերազանցելու դեպքում ավանդի տոկոսադրույքը սահմանվում է պայմանագրային կարգով՝ համաձայն Հիմնական պայմանների:

Հավելված

Տոկոսադրույքներ

Կուտակային ժամկետային ավանդների տարեկան անվանական տոկոսադրույքներ

Արժույթ	Բանկի մանրածախ հաշվարկային տոկոսադրույք (ՄՀՏ)*	Տարեկան անվանական տոկոսադրույքն՝ ըստ ամիսների			
		36 ամիս	48 ամիս	60 ամիս	120 ամիս
ՀՀ դրամ	9.00% Ուժի մեջ է 2020թ.-ի մարտի 12-ից	*ՄՀՏ -1.50%*	*ՄՀՏ -1.50%*	*ՄՀՏ - 1.00%*	*ՄՀՏ - 1.00%*
		7.50%	**7.50%**	**8.00%**	**8.00%**
ԱՄՆ դոլար	3.20% Ուժի մեջ է 2024թ.-ի ապրիլի 22-ից	*ՄՀՏ - 0.70%*	*ՄՀՏ - 0.45%*	*ՄՀՏ - 0.20%*	
		2.50%	**2.75%**	**3.00%**	
Եվրո	6.90% Ուժի մեջ է 2024թ.-ի ապրիլի 22-ից	*ՄՀՏ - 5.40%*	*ՄՀՏ - 5.15%*	*ՄՀՏ - 4.90%*	
		1.50%	**1.75%**	**2.00%**	

- ՀՀ դրամով անվանական տոկոսադրույքները գործում են 2018թ.-ի մայիսի 29-ից:
- ԱՄՆ դոլարով անվանական տոկոսադրույքները գործում են 2023թ.-ի նոյեմբերի 1-ից:
- Եվրոյով անվանական տոկոսադրույքները գործում են 2023թ.-ի նոյեմբերի 1-ից:

Կուտակային ժամկետային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերություն

Արժույթ	Տոկոսագումարի վճարման/ կապիտալացման պարբերականություն	Ամիսներ			
		36 ամիս	48 ամիս	60 ամիս	120 ամիս
ՀՀ դրամ	Ամսական	7.76%	7.76%	8.30%	8.30%
	Եռամսյակային	7.71%	7.71%	8.24%	8.24%
ԱՄՆ դոլար	Ամսական	2.53%	2.78%	3.04%	
	Եռամսյակային	2.52%	2.78%	3.03%	
Եվրո	Ամսական	1.51%	1.76%	2.02%	
	Եռամսյակային	1.51%	1.76%	2.01%	

Կուտակային ժամկետային ավանդից ստացված տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուշադրություն՝ Կուտակային ժամկետային ավանդի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարները կատարելու (առկայության դեպքում) և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

* ՄՀՏ-ի վերաբերյալ մանրամասներին ծանոթանալու համար այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am

Պայմաններ

Ավանդի մարում

Կուտակային ավանդի ժամկետի ավարտից հետո ավանդի մայր գումարը և տոկոսագումարները չեն կարող ավտոմատ վերաներդրվել նոր ավանդի տեսքով: Բանկը մարում է ավանդը՝ կուտակված գումարը միանվագ կերպով փոխանցելով Ձեր հաշվին Ցպահանջ ավանդների պայմաններով: Վերջինիս համար Բանկի կողմից առաջարկվող տոկոսադրույքը կազմում է 0%:

Ավանդի դադարեցում

Եթե Կուտակային ժամկետային ավանդի պայմանագիրը դադարեցվում է պայմանագրի գործողության առաջին 12 ամիսների ընթացքում, վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի դիմաց հաշվարկված/ վճարված տոկոսագումարի մեկ հարյուրերորդականի չափով: Եթե Կուտակային ավանդի պայմանագրի գործողությունը դադարեցվում է պայմանագրի գործողության առաջին 12 ամիսը լրանալուց հետո, վճարվող տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի փաստացի ժամկետին համամասնորեն՝ ստորև ներկայացված բանաձևով.

$$ՎՏ = ՀՏ \times \frac{ՓԺ}{ՍԺ}$$

որտեղ,
ՎՏ – վճարման ենթակա տոկոսագումար
ՀՏ – հաշվարկված տոկոսագումար
ՓԺ – փաստացի ժամկետ
ՍԺ – սկզբնական ժամկետ

Ավանդի պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերոնշյալ դեպքերում համապատասխանաբար կնվազի ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը:

Եթե տոկոսագումարն արդեն վճարվել է, վճարման ենթակա տոկոսագումարի և մինչև ավանդի պայմանագրի դադարեցման պահն ավանդի դիմաց վճարված տոկոսագումարների տարբերությունն ավանդի մարման պահին նվազեցվում է ավանդի գումարից:

Վերոնշյալ կարգը չի կիրառվում տոկոսադրույքի նվազման հետևանքով մինչև փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելու պահը Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում:

Ինչպե՞ս դիմել

Կարող եք բացել Կուտակային ժամկետային ավանդ՝ այցելելով Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի ցանկացած մասնաճյուղ, և հաճախորդների սպասարկման բաժնի մեր մասնագետները կօգնեն Ձեզ:

Ինչպե՞ս կուտակել և խնայել

Կուտակային ժամկետային ավանդն ունի համալրման 2 տարբերակ[1]՝

- Տարբերակ 1 – Դուք, ինչպես նաև ցանկացած երրորդ անձ, կարող եք ավանդի գումարի համալրումներ իրականացնել ավանդի հաշվին մեկանգամյա մուտքագրումների միջոցով ավանդի կուտակային ժամկետի առաջին 1/3-ի ընթացքում՝ ընդհանուր 5 միլիոն ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ համապատասխանաբար 10 000 ԱՄՆ դոլար կամ 10 000 եվրո) կամ ավանդի սկզբնական գումարի 50%-ի չափով, կախված այն հանգամանքից, թե նշված գումարներից որն է ավելի մեծ:
- Տարբերակ 2 – Դուք կարող եք ավանդի գումարի համալրումներ իրականացնել ավանդի կուտակային ժամկետի առաջին կեսի ընթացքում՝ ավանդը բացելիս տրված գրավոր պարբերական գանձման հանձնարարականի հիման վրա (ամսական կամ եռամսյակային հաճախականությամբ): Համալրումն ամսական հաշվարկով չի կարող գերազանցել ավանդի սկզբնական գումարի 2.5%-ը կամ 250 000 ՀՀ դրամը (ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ համապատասխանաբար 500 ԱՄՆ դոլար կամ 500 եվրո), կախված այն հանգամանքից, թե նշված գումարներից որն է ավելի մեծ:

Ավանդի սկզբնական գումար է համարվում ավանդը բացելիս ավանդային հաշվին մուտքագրված, ինչպես նաև ավանդային պայմանագրով նախատեսված ավանդի բացման օրվանից մեկ ամսվա ընթացքում ավանդային հաշվին փաստացի մուտքագրված միջոցների հանրագումարը:

Հանձնարարականով համալրման դեպքում հաճախորդի ելքագրման հաշվեհամարին երեք անգամ անընդմեջ անբավարար մնացորդ լինելու պարագայում Բանկն իրավունք ունի հանձնարարականը համարել չեղյալ: Այս դեպքում ավանդի գումարի համալրումներ հնարավոր է իրականացնել միայն նոր պարբերական վճարման հանձնարարական տալու պարագայում:

Ընտրված տարբերակով նախատեսված ավանդի գումարի համալրումներից դուրս համալրումները հաշվարկվում են համապատասխան տարբերակով սահմանված ընդհանուր սահմանաչափի մեջ և հանգեցնում են այդ սահմանաչափի նվազեցմանը:

Սույն բաժնում նշված սահմանաչափերը գերազանցող ավանդին համալրված միջոցները նույն օրը կփոխանցվեն պայմանագրում նշված ելքագրման ենթակա հաշվի համարին:

[1] Սույն կարգավորումը գործում է 2018 թ.-ի ապրիլի 1-ից հետո բացված Կուտակային ժամկետային ավանդների դեպքում:

Գումարը կարող եք փոխանցել ավանդային հաշվին հետևյալ եղանակներով՝

- Բանկոմատային ցանց. Երևանում գործող ցանցը ներառում է 50-ից ավել բանկոմատ 40-ից ավել վայրերում
- Հեռախոսային բանկային ծառայություն. +374 60 655 000 շուրջօրյա հեռախոսահամարով՝ ծառայությանը գրանցված լինելու դեպքում
- Օնլայն/մոբայլ բանկային ծառայություն. ծառայությանը գրանցված լինելու դեպքում
- Մասնաճյուղային ցանց

- Տոկոսագումարները կարող են վճարվել կա՛մ ավանդի արժույթով, կա՛մ ՀՀ դրամով:
- Երրորդ անձանց կողմից Կուտակային ժամկետային ավանդի բացումը հնարավոր է միայն մինչև 18 տարեկան երեխայի անունով, **ընդ որում մինչև 18 տարեկան երեխայի հաշվի առկայությունը պարտադիր է:**
- Ավանդի մայր գումարը/տոկոսագումարը չեն կարող փոխանցվել երրորդ անձի հաշվին:
- Ձեր ավանդի հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Օրենքով սահմանված են ավանդների երաշխավորման հետևյալ սահմանաչափերը՝

Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	16 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	7 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ, և եթե դրամային ավանդը գերազանցում է 7 միլիոն դրամը	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
Եթե նույն բանկում ունեք և՛ ՀՀ դրամով, և՛ արտարժույթով ավանդ, և եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Վեճերի լուծման կարգը

Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրության համաձայն:

Եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 10 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք գումարն այլ արժույթով, վեճը կարող է լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, եթե Ձեր կողմից Բանկի նկատմամբ ներկայացված գույքային պահանջը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Կուտակային ժամկետային ավանդի տոկոսագումարի հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Տոկոսագումարի հաշվարկն օրական կտրվածքով կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Մայր գումար} \times \text{Տոկոսադրույք}}{365 \text{ (կամ 366՝ նահանջ տարվա դեպքում)}}$$

Մայր գումարը տվյալ օրվա դրությամբ ժամկետային ավանդի մնացորդն է: Տվյալ օրվա դրությամբ Մայր գումարը կարող է կազմված լինել ավանդի սկզբնական գումարից, կապիտալացված տոկոսագումարից և կուտակային ավանդի պարբերական ներդրումների գումարից:

Տոկոսադրույքը տվյալ ավանդի և ժամկետի համար սահմանված տարեկան անվանական տոկոսադրույքն է:

Բանկի կողմից հաճախորդների բողոքների քննության ընթացակարգը և «Ի՞նչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը հասանելի են Բանկի պաշտոնական կայքում՝ www.hsbc.am:

Կուտակային ժամկետային ավանդի վերջնական մնացորդի հաշվարկ

Ավանդի գումար	100 000 ՀՀ դրամ
Ամսական ներդրումներ	10 000 ՀՀ դրամ
Առաջին ներդրման ամսաթիվը	01.06.2023թ
Ավանդը համալրման տարբերակ	Տարբերակ 2
Ավանդի ժամկետ	36 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	7.5%
Տոկոսագումարի վճարման եղանակ	տոկոսագումարի ամսական կապիտալացում
Հաշվետու տարվա օրերի քանակ	365/366
Ավանդի ընթացքում ներդրումների քանակ	18
Ավանդի վերջնաժամկետ	17.09.2026

Հաշվարկված տոկոսագումար ավանդի ամբողջ ժամկետի համար = 57 012 ՀՀ դրամ

Տոկոսային եկամտից հարկ 10% = 57 012 x 10% = 5 701 ՀՀ դրամ

Վճարված զուտ տոկոսագումար = 57 012 – 5 701 = 51 311 ՀՀ դրամ

Ավանդի վերջնական գումարն ավանդի ժամկետի վերջում (մայր գումար+ավանդի ժամկետի ընթացքում կատարված ներդրումներ+մայր գումարի վրա հաշվարկված և վճարված տոկոսագումար+կապիտալացված տոկոսագումարի վրա հաշվարկված և վճարված տոկոսագումար) կազմում է՝

100 000 + 18 x 10 000 + 51 311 = 331 311 ՀՀ դրամ:

Տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի բացման ամսաթվից մինչև ավանդի վերջնաժամկետը (տոկոսագումարը չի հաշվարկվում ավանդի վերջնաժամկետի օրը):

Կուտակային ժամկետային ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման բանաձևը և ներկայացուցչական օրինակ

Ավանդի սկզբնական գումար	100 000 ՀՀ դրամ
Ավանդի ժամկետ	36 ամիս
Ավանդի տարեկան անվանական տոկոսադրույք	7.50 %
Ավանդի տեսակ	Կուտակային ժամկետային ավանդ
Օրինակ 1 - Կապիտալացման պարբերականություն	ամսական
Օրինակ 2 - Կապիտալացման պարբերականություն	եռամսյակային

APY = (1+r/n)n-1

որտեղ՝

APY – ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է

r – ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքն է

n – կապիտալացումների քանակն է մեկ տարվա ընթացքում

Օրինակ 1

APY = $(1+0.075/12)^{12}$ -1 = 7.76%
որտեղ՝
r = 0.075 (7.5%), որը ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքն է
n = 12/1 = 12, որը կապիտալացումների քանակն է մեկ տարվա ընթացքում

Օրինակ 2

APY = $(1+0.075/4)^{4}$-1 = 7.71%
որտեղ՝
r = 0.075 (7.5%), որը ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքն է
n = 12/3 = 4, որը կապիտալացումների քանակն է մեկ տարվա ընթացքում

Կարևոր տեղեկություններ

- **Կուտակային ժամկետային ավանդ ներդնելու ծառայությունը հասանելի է միայն Բանկի հաճախորդներին:**
- **Կուտակային ժամկետային ավանդի հաշիվը բացվում է անվճար և ենթակա չէ սպասարկման վճարների ավանդի պայմանագրի գործողության ողջ ընթացքում:**
- Ֆիզիկական անձանց Կուտակային ժամկետային ավանդները ենթակա են վերադարձման ավանդատուի առաջին իսկ պահանջով:
- **ՀՀ տարածքում ավանդի հաշվի քաղվածքների առաքման վճար չի կիրառվում:**
- **Մինչև 6 ամսվա վաղեմություն ունեցող քաղվածքների կրկնօրինակների կամ ավանդի հաշվի պատմության վերաբերյալ տեղեկանքների համար վճար չի կիրառվում:** 6 ամսից ավել վաղեմություն ունեցող քաղվածքների կրկնօրինակների կամ ավանդի հաշվի պատմության վերաբերյալ տեղեկանքների համար կիրառվում է 3 000 ՀՀ դրամ վճար՝ յուրաքանչյուր ամսվա կամ քաղվածքի համար:
- Դուք իրավունք ունեք հաղորդակցվել մեզ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:
- Սույն տեղեկատվական ամփոփագրին զուգահեռ անհրաժեշտ է ծանոթանալ նաև Բանկի՝ «Հաճախորդների բանկային հաշիվների սպասարկման, բանկային ավանդների տրամադրման, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ» և «Ծառայությունների սակագներ» ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար տեղեկատվական ամփոփագրերին, որոնք հասանելի են նաև Բանկի ինտերնետային կայքում՝ www.hsbc.am:
- **Հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այլ ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող նմանատիպ ծառայությունները համեմատելու համար կարող եք այցելել նաև Ֆինանսական տեղեկատու կայքէջը հետևյալ հղումով՝ www.fininfo.am:**

  Ուշադրություն: «Ձեր Ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:
- Հաճախորդների ավանդային հաշիվների համար Բանկը վերջիններիս տրամադրում է համապատասխան քաղվածքներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հաճախորդները քաղվածքները կարող են ստանալ իրենց փոստային հասցեով կամ էլեկտրոնային փոստով: Անկախ նախընտրած հաղորդակցման եղանակից՝ Հաճախորդները պարտադիր ներկայացման տեղեկատվությունը կարող են ստանալ նաև առձեռն Բանկի ցանկացած մասնաճյուղում: Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանների, ժամկետների և սակագների վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ Բանկի՝ «Ծառայությունների սակագներ» տեղեկատվական ամփոփագրում կամ Բանկի ինտերնետային կայքում՝ այցելելով հետևյալ հղմամբ՝ www.hsbc.am:

- Բանկը կարող է Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրել և տրամադրել HSBC Խմբի մեջ մտնող ընկերություններին և օտարերկրյա իրավասու մարմիններին՝ ֆինանսական հանցագործությունների ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության պարտավորություններն ապահովելու նպատակով՝ հիմք ընդունելով նաև համապատասխան միջազգային կարգավորումները: Նշված տեղեկությունների հավաքագրման և օգտագործման կարգը և պայմանները սահմանվում են Հիմնական Պայմաններին որպես Հավելված կցվող և Հիմնական Պայմանների անբաժանելի մասը կազմող «Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմաններ» փաստաթղթով: Այդպիսի կարգավորումներից է «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (ՕՀՀՀԱ), որն ուժի մեջ է մտել 2014թ. հուլիսի 1-ից: Այս օրենսդրական ակտը, որի կիրառումն ապահովվում է Միացյալ Նահանգների կառավարության կողմից, ուղղված է հարկային համապատասխանության խրախուսմանը՝ կանխարգելելով, որ ԱՄՆ քաղաքացիներն իրենց եկամուտների և ակտիվների հարկումից խուսափելու նպատակով օգտվեն ոչ ամերիկյան ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա ձեռնարկություններից:
- Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի պահանջների՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարելու (այդ թվում՝ բանավոր) կամ պահանջելու լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024

Բոլոր իրավունքները պահպանված են: